ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈԿՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀՍՍՀ վաստակավոր բժիշկ, պրոֆեսոր Սոկրատ Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտայի հ.21 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈԿՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՍՍՀ վաստակավոր բժիշկ, պրոֆեսոր Սոկրատ Հովհաննիսյանը ծնվել է 1920թ. Օրդուբադի շրջանի Բիստ գյուղում (Ադրբեջան):

Նախնական կրթությունը ստացել է Նախիջևանի ինտերնացիոնալ դպրոցի հայկական բաժնում, որտեղ 7-րդ դասարանն ավարտելուց հետո, եկել է Երևան և ընդունվել բժշկական տեխնիկում:

1937թ. տեխնիկումը հաջողությամբ ավարտելուց հետո Սոկրատ Հովհաննիսյանն ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժպրոֆիլակտիկ ֆակուլտետի առաջին կուրս:

1941թ. Սոկրատ Հովհաննիսյանը զորակոչվել է բանակ և պատերազմի ծանրագույն օրերին հայտնվել Կովկասի ռազմաճակատում: Ստանձնել է վիրաբուժական դաշտային շարժական հոսպիտալի վիրաբուժական բաժանմունքի պետի պատասխանատու պաշտոնը:

1946թ. ավարտել է ռազմաբժշկական երեքուկեսամյա գործունեությունը և վերադառձել Երևան՝ որպես Երևանի առաջին կլինիկական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի օրդինատոր:

1961թ. նյարդավիրաբուժության մեջ կատարելագործվելու նպատակով 4-ամսյա ժամկետով Սոկրատ Հովհաննիսյանը գործուղվել է Անգլիա: Վերադառնալով Երևան՝ հիշյալ բնագավառներում ձեռք բերած տեսական ու գործնական գիտելիքները սկսել է հաջողությամբ կիրառել հանրապետությունում:

1962թ. նա նշանակվում է Երևանի բժշկական ինստիտուտի ռեկտոր:

1965-1966թթ. Սոկրատ Հովհաննիսյանը ղեկավարել է Առողջապահության միջազգային կազմակերպության կողմից Երևանի բժշկական ինստիտուտում անցկացվող գիտաժողովի աշխատանքները:

1966թ. ռեկտորի պաշտոնից ազատվելուց հետո նա ինստիտուտում հիմնադրել և անձամբ ղեկավարել է իր տեսակի մեջ յուրահատուկ կլինիկական ամբիոն, որը կոչվում էր վնասվածքաբանության, ռազմադաշտային և նյարդավիրաբուժության ամբիոն, որտեղ առաջին անգամ կազմակերպել է նաև անզգայացման և վերակենդանացման դասավանդումը: Անվանի գիտնականի ծառայությունները բարձր են գնահատվել, որի արդյունքում նա արժանացել է «Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի», «Կարմիր աստղի» շքանշանների, մեդալների և հանրապետության վաստակավոր բժշկի կոչման:

Սոկրատ Հովհաննիսյանը մահացել է 1966թ.:

ՀՍՍՀ վաստակավոր բժիշկ, պրոֆեսոր Սոկրատ Հովհաննիսյանի հուշատախտակը Բաղրամյան պողոտայի հ.21 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի աշխատակազմի ղեկավար Շուշանիկ Դանիելյանի կողմից:

Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերն իրականացվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ